

սունը: Բայց եթէ շուն կամ կատու սատկած գտուէին բանջարի մը ներքեւ, ամբողջովին պղծուած էր այս, թէեւ երկու դիակաց պղծութիւնն հաւասար չլինէր (9): Նոյնպէս եթէ անօթով կերակրոյ մէջ պիղծ կենդանի մ'ընկնի, «պղծեսցի բուրն», կ'ըսէ Տաթեւացին (Քրգ. ձմր. 134): Այդ պարագային զեռուն մ'ալ կրնար ապականել՝ Շնորհալոյն այս բացատրութեան համեմատ. «զմեռելոտի զեռնովք պղծեալ կերակուրսն եւ զըմպելիսն» (Ընդհ. 157), ըստ որում բոլոր զեռունք անսուրբ էին հին օրինօք (Ղեւտ. ԺԱ, 42): Բայց Ալաւկայ որդին անվնաս կը համարի աղոցմէ զոմանս, ինչպէս մողէզ, օձասանդը, ականջամուտ եւ ուրիշ անարիւն բզէզներ, որոնք ընկնելով՝ կ'ըսէ՝ գինւոյ, կաթի կամ ձիթոյ մէջ՝ չեն պղծեր. ով կարող է՝ թող ուտէ (Ը):

Տաթեւացւոյն երեւակայութիւնը սեղանօրհնէից նպատակին մէջ անգամ կ'ուզէ նշմարել պղծութեան զաղափարը. որպէս թէ կերակուրք կ'օրհնուին, որ եթէ կալի կամ հնձանի մէջ «աղտեղութիւն ինչ» խառնուի, եւ կամ որովհետեւ անսուրբ անասնոյ մը «ձարով» կը մաղուի ալիւրը, աղօթիւք սրբուին (Քրգ. ամր. 348):

2. - Մկնապիղծ: — Բոլոր անասնոց